

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՏՐՈՊՈՒՈՒՈՒԳԻԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ
«ՄԱՍՆԱ ԾՈՒՆ» ԷՊՈՍՈՒՄ**

Ղազարյան Արևիկ
*Երևանի պետական համալսարան,
Հայաստան*

Համառոտ ներածական: Յուրաքանչյուր գիտաճյուղի զարգացման համար անհրաժեշտ են ձևավորման նախադրյալներ, որոնք տարբեր մեթոդաբանական հիմքեր ունեն: Մանկավարժական անտրոպոլոգիական մտքի զարգացման նախադրյալները ձևավորվել են հայ ժողովրդի բանահյուսության մեջ: Դրանք հնարավորություն են տալիս տեսնելու, թե զարգացումը ինչ ընթացք է ունեցել, կանխատեսելու զարգացման հեռանկարները:

Բանալի բառեր: Մանկավարժական անտրոպոլոգիական օրինաչափություններ, ամբիվալենտություն, գիտաճյուղի զարգացման նախադրյալներ:

Հիմնախնդիրը: «Մասնա ծոեր» դյուցազնավեպի վերլուծությունը մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ հնարավորություն կտա հիմնավորելու, որ այս գիտաճյուղի մտքի ձևավորման նախադրյալներն առկա են նաև հայ ժողովրդի բանահյուսության մեջ՝ ձևավորելով համամարդկային և ազգային արժեքներ, դաստիարակչական մոդելներ, որոնք անգնահատելի դերակատարում կունենան մանկավարժական անտրոպոլոգիական մտքի հետագա զարգացման վրա:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտություններ: Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունները իրականացվել են մանկավարժության երիտասարդ գիտաճյուղերի՝ մանկավարժական մարդաբանության (Բիմ-Բաղ Բ., Մակսակովա Բ., Մայակովա Ն., Օգուրցով Ա.), մշակութային մարդաբանության (Դորբենկո Բ., Օրլովա Է., Կրուպկին Բ., Պոմիեշինսկի Ա.), մանկավարժական արքեոլոգիայի (Սլաստենին Վ., Չիժակով Գ., Կոնդակով Ա., Գուդաչեկ Յ., Մարոյան Ռ.) շրջանակներում: Վերլուծելով և համադրելով տարբեր մոտեցումներն ու կարծիքները՝ կարելի է ասել, որ ցանկացած նոր գիտաճյուղի նախադրյալները կարելի է գտնել ժողովրդական բանահյուսության մեջ: Ընդհանուր մարդաբանական օրինաչափություն է բոլոր ժողովուրդներն ունեն դյուցազնավեպեր:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ վերլուծել «Մասնա ծոեր» էպոսը, որը, հայ ժողովրդի սոցիալական անձնագիրը լինելուց բացի, նաև կենսաբանական ծրագիրը ներկայացնող գոյապահպանական էվոյուցիա է՝ էպոսի համապատասխան ճյուղերով, զարգացման ընթացքով:

Հետազոտության նորույթը: «Մասնա ծոեր» էպոսը ներկայացվել է մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ՝ փաստելով, որ էպոսում առկա են գիտաճյուղի ձևավորման նախադրյալները:

Հիմնական նյութի շարադրանքը: Հայ իրականության մեջ առկա են բոլոր նախադրյալները նոր գիտաճյուղի մանկավարժական անտրոպոլոգիայի ձևավորման և զարգացման համար: Ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես ժողովրդական հեքիաթները, բալլադները, դյուցազնավեպը՝ էպոսը, ամբարում են տարբեր գիտաճյուղերի զարգացման համար արժեքավոր մոտեցումներ և գաղափարներ: Մարդկության ֆիլոգենետիկ զարգացման ընթացքում տարբեր ժողովուրդների դաստիարակչական համակարգում ձևավորվել են համանման էպոսներ՝ բնության, շրջապատող աշխարհի ճանաչողության, մարդկային փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման, դաստիարակչական մոդելների, երազանքների, կանխատեսվող արդյունքների վերաբերյալ: «Մարդկությունը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ընտրությունն անհրաժեշտ է, հետևանքը անխուսափելի: Այսօրվա սխալը կարող է լինել անուղղելի, այսօրվա մեղքը՝ մահացու: Ուստի ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների անկասելի թվացող շարունակական առաջընթացն

այսուհետ պետք է իրականացվի մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի պահպանմանը նպաստակամ դրված սոցիալական, իրավական և բարոյագիտական նոր նորմերի ստեղծմամբ, որոնց միջոցով պետք է վերահսկել, իսկ հարկ եղած դեպքում՝ սահմանափակել մարդու սրբության սրբոց բնությունն անհարկի արհեստական ներխուժման՝ սոցիոլոգիայի իմաստով վտանգավոր փորձարկումներից, ըստ էության՝ փրկել մարդուն մարդուց» [3, էջ 33]: Մարդ բանական տեսակը զարգացում է ապրում՝ փոփոխելով սեփական բնութագիրը. «Մարդը զարգացող էակ է զարգացող աշխարհում: Նրան բնորոշ է իր շրջապատը փոփոխելու կարողությունը» [4, էջ 13]: Պատմության ընթացքում մարդը, մի կողմից, գոյամարտում է իր ինքնությունը պահելու համար, մյուս կողմից՝ փորձում որակապես փոփոխել իր շրջապատը, ապրելու մոտեցումները, այսինքն՝ ժամանակի, տարածության խնդիր, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է պատմական անտրոպոլոգիան՝ ներառելով պատմական պայմանները, արարքները, համոզմունքները [4, էջ 21]:

«Մասնա ծռեր» էպոսը ամբողջացնում է հայ ժողովրդի իմաստությունը. այն հայ էթնոսի սոցիալական անձնագիրն է: Ինչպես Մանուկ Աբեղյանն է գիտականորեն հիմնավորում «Հայ ժողովրդական վեպ» ուսումնասիրության «Հեքիաթ և վեպ» ենթագլխում, էպոսում մեր առաջ ծավալվում են և՛ հեքիաթային սյուժեներ՝ մոտիվներ, առասպելներ, և՛ դյուցազնական սխրագործություններով լի երգեր ու գրույցներ, պատմական իրական միջադեպեր [2, էջ 27-32]:

Մեր էպոսը համամարդկային, **ընդհանուր** օրինաչափության հենքի վրա ձևավորում է **յուրահաստուկը**՝ հայ ազգին բնորոշ, որից հետո **եզակին**՝ տվյալ անձին բնութագրող: ...Հրաշք է կատարվում. կյանքի աղբյուր համարվող Մարութա Բարձրիկ Սուրբ Աստվածածինը Մանասարին է հանձնում Թուր Կեծակին (կայծակնային սուր) և Քուռկիկ Ջալալին: Առասպելական ձին ուներ աննկարագրելի արտասովոր հատկություններ, մարդկային լեզվով խոսելուց բացի՝ նաև կարողանում էր անծայրածիր ճանապահներ անցնել և թռչել մինչև արեգակ: Կենսատու ջրերում Մանասարը ձեռք է բերում նաև անխոցելի զենք ու գրահ, իսկ բազուկի վրա դրոշմվում է յուրօրինակ մի խաչ: Ծովի ջուրը Մանասարին դարձնում է իրական մի հսկա [1]: Հերոսները գոյապայքար են մղում իրենց զարմի շարունակության համար: Այդ հերոսներն օժտված են գերբնական ուժով, կրակոտ ու շիտակ բնավորությամբ, չարը կործանելու և բարին հաստատելու վճռականությամբ: Նրանք ներկայացնում են հորից որդի արյունակցական կապ և անձնուրացորեն կռվում են հանուն իրենց երկրի անկախության: Բնորոշ է, որ Մանասարն ու Բաղդասարը նախ տներ են կառուցում իրենց մոտ բնակություն հաստատած աղքատ ընտանիքների համար, ապա՝ կառուցում Մանասբերդը: Կամ՝ Մեծ Միերը, գոտեմարտի մեջ մտնելով առևտրական բանուկ ճանապարհի վրա հայտնված առյուծի հետ, սպանում է գազանին և փրկում Մասունը սովի վտանգից: Ուշագրավ է նաև նույն Պղնձե քաղաքում Քառասուն-Ճյուղ-Ծամի ազատագրման համար նրանց մղած կռիվը: Մանասարը ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Մակայն դա նրան հեշտությամբ չի հաջողվում, որովհետև աղջիկը բանտարկված է ծովում նստած նույն մահվան ուժի վիշապի և վերջինիս երկվորյակ թագավորի կողմից, որն աղջկա հայրն է համարվում: «Այդտեղ փակված աղջիկը, – գրում է Մ. Աբեղյանը, – նույն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը հափշտակել է» [2, էջ 27-28]:

«Մասնա ծռերի» բոլոր չորս ճյուղերը շաղկապվում են իրար՝ իբրև մեկ ընդհանուր և ամբողջական հորինվածք՝ ընդգծելով այն պատմական իրողությունը, թե արաբական բռնապետության դեմ հայության ազատագրական պայքարը շարունակել են մի քանի սերունդներ: Այսպիսի տրամաբանական զարգացող օրինաչափությունների շղթան մանկավարժական անտրոպոլոգիայի գերակա հիմնախնդիրներից մեկն է, որտեղ դրսևորվում է ընդհանուրի, յուրահաստուկի, եզակիի մանկավարժական անտրոպոլոգիական օրինաչափությունների դիալեկտիկան: Դավիթը աճում էր ժամով և վայրկյանով՝ դրսևորելով հայ դյուցազուն նախնիներին բնորոշ գծերը [1]:

Չանդրադառնալով էպոսի բազմաբնույթ գործառույթներին, առանձնահատկություններին և գոյապահպանական ակունքին, որի մասին բազմիցս խոսվել է տարբեր գիտությունների շրջանում, փորձենք ներկայացնել «Մասնա ծռեր» էպոսը մանկավարժական անտրոպոլոգիական կողմով: Մանկավարժական անտրոպոլոգիական տեսանկյունից տարբեր ժողովուրդների էպոսները սոցիալ-հոգեբանական, արժեքային, իմացական միջավայր են, որտեղ մարդ տեսակը, ունենալով համապատասխան գենետիկական կողով պայմանավորված կենսաբանական ծրագիր, Մասունցի

Դավթի միջնորդավորված կերպարի օգնությամբ տեսական մակարդակում հնարավոր հարմարման մեխանիզմներ է ձեռք բերում՝ սոցիալական ծրագիրը դրսևորելու համար: Էպոսում կենսաբանական ծրագիր-սոցիալական ծրագիր-պատմամշակութային ծրագրերի եռամիասնական դիալեկտիկական ամբողջության քննարկումը նույնպես մանկավարժական անտրոպոլոգիական հիմնախնդիր է, որտեղ էպոսների հերոսները ապագայում կանխատեսվող դաստիարակչական մոդելում ազատագրական պայքարի, հայի հպարտ անկոտրում կամքի, հզոր բազկի, ազնվության, ապրումակցման որակների արտահայտման սոցիալական ազենտներ են: Յուրաքանչյուր ազգային դյուցազնավեպ սոցիալական, ուսուցողական, դաստիարակչական իրավիճակային մոդել է, որում շեշտադրվում են տվյալ ազգին բնորոշ մշակութային նրբերանգային գույները, կոլորիտը, ազգային առանձնահատկությունները, հոգեկերտվածքը, վարքագծային, դաստիարակչական, հաղորդակցական մոդելները, ապագան կանխատեսելու հնարավոր տարբերակները: Գլխավոր հերոս Դավթի կերպարում անհատական զարգացման ընթացքում դրսևորվում է զարգացման շարժիչ ուժերի ամբիվալենտությունը, որը մանկավարժական անտրոպոլոգիայի տեսանկյունից նույնպես առանցքային հիմնախնդիրներից է, որը հնարավորություն է տալիս ընտանեկան, սեռային, դերային, մշակութային սոցիալականացում ապահովելու: Կքննարկենք երեք խումբ մանկավարժական անտրոպոլոգիական խնդիրներ:

Վերլուծության համար ընտրել ենք դյուցազնավեպը, քանի որ հայ իրականության մեջ այն առավելագույնս բնութագրում է հայ ազգի հավաքական կերպարը, մտածողության, վարքագծային առանձնահատկությունները, օրհասական պահերին իրավիճակ գտնելու, հպարտությամբ ազատ ապրելու, պետական մտածողության անձնուրաց դրսևորումները: Երբ քննարկում ենք ընդհանուր-հատուկ- եզակի օրինաչափությունները, ապա ընդհանուր օրինաչափությունները վերլուծելիս նկատում ենք՝ բոլոր ժողովուրդներն ունեն էպոսներ. դա համընդհանուր օրինաչափություն է, որը ապացուցում է բանական մարդու ֆիլոզոֆիկ զարգացման մասին, որի ժամանակ փոխանցվում են կենսաբանական կոդում ամրագրված համամարդկային հատկանիշները՝ խոսելու կարողություն, մտածելու ունակություն և ուղղաձիգ կեցվածք, որոնց դրսևորման հիմքում բնություն-մարդ-դաստիարակություն բարդ գործառական համակարգն է: Ընդհանուրից հատուկին անցման ընթացքում բնութագրական չափանիշները բարձրանում են մի նոր մակարդակ, որտեղ շեշտադրվում են ազգային գործոնը, արժեքային համակարգը, ինչպես, ասենք, Դավթի կերպարում, որում դրսևորվում են ոչ միայն հայ ազգին բնորոշ անատմիաֆիզիոլոգիական հատկանիշները, արժեքային համակարգը, այլև վարքագծային դրսևորումները, հոգեբանությունը, մտածողության տիպաբանությունը, և այս մակարդակում, բացի նախորդ բնություն-մարդ-դաստիարակություն համակարգից, ավելանում է նոր ենթահամակարգ՝ մշակույթը՝ իր ուղղահայաց և հորիզոնական ծածկույթով: Մշակութային մակարդակում էպոսի գլխավոր հերոսները ձեռք են բերում նոր որակներ, որոնք տիպական են միայն տվյալ ազգին: Անտրոպոլոգիական յուրօրինակ խնդիրներ են առաջանում, երբ ազգային մակարդակում շեշտադրվում է մարդու զարգացման եզակի օրինաչափությունը, որը հնարավորություն է տալիս նկատելու կոնկրետ տիպական հերոսին կոնկրետ իրավիճակում՝ թշնամու թրի տակով չանցնելիս, մենամարտելիս, իմաստուն մեծերի հետ զրույցների ընթացքում:

Ծովից բխող աղբյուրից խմած երկու բուռ ջրից Ծովինարը հղիանում է և ծնում երկվորյակ դյուցազուններ: Ջուրը դառնում է ժառանգորդային կարևոր սկզբունք. Սանասարն իր դյուցազնական գործությունը, հրեղեն ձին, Թուր Կայծակին ձեռք է բերում ծովի հատակից՝ այնտեղ բխող Կաթնաղբյուրից ջուր խմելով, երկվորյակներն իրենց տունը շինում են հզոր առվակի ակունքի վրա, ունենում հզոր ժառանգ:

Ներկայացված եռամիասնական դիալեկտիկայում՝ ընդհանուր- հատուկ- եզակի, դրսևորվում է զարգացման շարժիչ ուժերի ամբիվալենտությունը, որոնք էպոսի տարբեր ճյուղերում նկատվում են երկու շերտերում՝ **ամբողջական** և **կոնկրետ** հերոսների նկարագրում, նրանց ստանձնած սոցիալական դերով, վերապահված առաքելությամբ համապատասխան իրավիճակում: Ամբիվալենտ գույգերի ընտրությամբ պայմանավորված՝ կան, օրինակ, բարին ու չարը, խելոքն ու հիմարը, աշխատասերն ու ծուլը, հնարամիտն ու չկողմնորոշվողը, երջանիկն ու դժբախտը, դրականն ու բացասականը, ուրախն ու տխուրը, հաջողակն ու անհաջողակը, թշնամին ու բարեկամը: Որքան ավելացնում ենք որակական բնութագրիչները, այնքան կոնկրետանում են հերոսների ամբողջական կերպարները: Մակայն էպոսում

տարբեր բարի հերոսներ դրսևորում են վարքագծային էապես տարբերվող գծեր, ինչն էլ իր հերթին կոնկրետանում է համապատասխան դաստիարակչական մոդելում: Կոնկրետ դաստիարակչական մոդելում տեսանելի են դառնում հերոսների մտածողության, բնավորության գծերի, վարքագծերի առանձնահատկությունները: Էպոսի բոլոր ճյուղերում կան ընդհանուր օրինաչափություններ.

1. Գաղափարական ուղղվածությունից կախված, նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր իրավիճակում առաջարկվում են հաղթահարման մեխանիզմներ կամ ապագայի նկատմամբ կանխատեսում, սակայն որպես առանցքային օրինաչափություն էպոսներն ավարտվում են դրական հերոսների հաղթանակով կամ լավատեսությամբ:

2. Դաստիարակչական, հաղորդակցական գրեթե բոլոր մոդելներում դրական հերոսների հոգեբանության մեջ գերակայում են հումանիստական ընկալումները, լավատեսությունը, նվիրումը, իր դերի գիտակցումը, հավատը ապագայի, վաղվա օրվա նկատմամբ:

3. Իրար հակադրող հերոսները սոցիալական միջավայրից միշտ ունենում են աջակցող օգնություն, գաղափարախոսվում է «ես»-ի և «մենք»-ի, «անձի» և «կոլեկտիվի» անհրաժեշտությունը, որը պարտադիր է հասարակություն անձի ինտեգրման տեսանկյունից:

4. Հերոսների վարքագծային զարգացման ընթացքը, անկախ տիպաբանությունից, գրեթե միշտ համակարգի մեջ է բնություն-մարդ-դաստիարակչական մոդել- մշակույթ: Այսպիսի դիրքորոշումը նույնպես անտրոպոլոգիական է, որը փաստում է մարդու զարգացման հիմնական մակարդակները՝ կենսաբանական, սոցիալական, մտավոր և հոգեբանական:

Վերը թվարկված օրինաչափությունները դիտարկենք կոնկրետ իրավիճակում: Օրինակ՝ էպոսի հերոսները փորձում են իրենց կարիքները հոգալ անընդհատ աշխատանքով, սակայն դժվարանում են հաղթահարել սոցիալական միջավայրի դժվարությունները. դրանց ավելանում է թշնամու զավթողական քաղաքականությունը: Ժողովրդի հույսն ու հավատը Դավիթն է, որը, ապավինելով սեփական ուժերին, վստահություն է ձեռք բերում, փորձում է իրավիճակները վերանայել, նույնիսկ սեփական պայմանները թելադրել թշնամուն՝ միաժամանակ ընդգծելով դաստիարակչական մոդելի ինքնատիպությունը՝ կովի ժամանակ առաջին զարկի իրավունքը թողնելով թշնամուն և հարգելով մեծի խնդրանքը: Մարդաբանական նախադրյալների տեսանկյունից սոցիալական միջավայրում էպոսի հերոսները շատ տարբեր են. կան դրական կերպարներ, որոնք ունեն բազմաթիվ առավելություններ՝ հաջողակ լինելու համար, բայց դժվար իրավիճակներում չեն կարողանում համապատասխան հաղթահարման մեխանիզմներ ընտրել, հստակ նպատակին հասնելու համար վեկտորիալ գիծ մշակել: Դաստիարակչական այս մոդելում, երբ սոցիալականացման ընթացքում դժվարություններ ունեցող սուբյեկտը չի գիտակցում իր սոցիալական դերը, ձախողվում է: Ոչ պակաս դժվարություն ունեն նաև բացասական հերոսները (Մառյե, Չմշկիկ Սուլթան), որոնք էպոսում բնութագրվում են խտացված գույներով, իրենց նենգությամբ, չարությամբ, գոռոգությամբ, մեծամտությամբ, խորամանկությամբ, վախկոտությամբ: Այստեղ հաղորդակցվող շրթայական բարդ մոդելում երկուստեք հարաբերություններ են տարբեր մակարդակներում, որտեղ յուրաքանչյուր օղակ ունի իր առանձնահատկությունները և դժվարությունները: Զարգացող տրամաբանական աստիճանական կապերը նպաստում են ամբողջական համակարգի ստեղծմանը: Ուսուցանվում են այն մոտեցումները, որ յուրաքանչյուր օղակի դժվարությունները պետք է լուծել իր մակարդակում, կանխատեսել հաջորդ մակարդակի պոտենցիալը, սակայն համակարգել ունեցած ձեռքբերումները՝ վերջնական արդյունք ունենալու համար: Էպոսի մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցումը, ըստ մանկավարժական գիտությունների համակարգի, «...Մանկավարժական անտրոպոլոգիան «մանկավարժական շենքի» հենքն է...» [4, 12]: Հատկանշական է, որ գլխավոր հերոսը ճարպիկ է, խելացի, փոքր տարիքում՝ պոռթկուն, աշխատասեր, չհաճոյացող, համարձակ և առաքինի: Հաղորդակցական մոդելները արագ ստացվում են, հերոսը հստակ պատկերացնում է իր վերջնական նպատակը և մեխանիզմներ ընտրում՝ դրան հասնելու համար: Շեշտադրված է դերային սոցիալականացումը շարունակական խնդիրների շրթան հաղթահարելու և կարողությունների ձևավորման համար:

Ընկերասիրության և դավաճանության յուրօրինակ խճանկարներ է ներկայացվում. նպատակային ընտրված սոցիալական ազենտները կարող են օգնել ռիսկային իրավիճակից դուրս գալու համար: Մարդկանց հավատալը, նրանցից օգնություն ակնկալելը, դժվարությունները հաղթահարելը ընդհանուր օրինաչափություն են: Դաստիարակչական յուրօրինակ մոդելի քննարկում է, երբ ցույց է տրվում, որ միննույն ընտանիքում կարող են ձևավորվել տարբեր խառնվածքային տիպ, նյարդային համակարգեր ունեցող մարդիկ, որոնց ծնողները նրանց փոխանցել են գենետիկական նախադրյալներ, սակայն սոցիալական ծրագրերը հարմարվել են համապատասխան միջավայրի պայմաններում: Այստեղ նույնպես կա վարքագծային ամբիվալենտություն հանդուրժողի ու չհանդուրժողի, բարու ու չարի, նյարդայինի ու համբերատարի, իրավիճակային մտածողի ու կոնկրետի և այլ տարբեր սոցիալական դերեր ու պայմաններ ունեցող անձանց միջև:

Լավատեսության, ոչ մի իրավիճակում հավատը չկորցնող, բարու հաղթական ուժին ապավինող, իրավիճակները հաղթահարող հերոսներից է գլխավոր հերոսը: Ապրելով ծանր պայմաններում, բայց չկորցնելով մարդկային արժանապատվությունն ու բարությունը, անգամ ամենաճանր պահերին հացը, ուրախությունը կիսելու անդադար ձգտումը՝ հնարավորություն է տալիս Դավթին դիմագրավելու սոցիալական սահմանափակումներին: Ի զարմանս մեզ՝ որքան խտացան գույները, դժվարացան կյանքի պայմանները, այնքան դրսևորվեցին անկոտրում կամքը, քաջությունը: Որդեգրած սկզբունքը իրական է, որի հիմքում հումանիստական մոդելն է, դրականը տեսնելու, ունեցածով բավարարվելու, երջանիկ լինելու և շրջապատը երջանկացնելու անսահման մեծ ձգտումը:

Կարևոր է, որ էպոսում ընտրվում է սոցիալական ընդլայնված միջավայրը, քանի որ մարդկանց մեծ ընդգրկումն ապահովում է տեղեկատվության տարածում, հոչակի և համբավի արագ տարածում: Այսպիսի մոտեցումը ժամանակին համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիա է: Էպոսում ներկայացվում է մարդկանց այն խումբը, որոնք, չունենալով կենսաբանական լիարժեք ծրագիր, սոցիալական ծրագրի հարմարման արդյունքում բախտի քմահաճույքով ամեն ինչի հասնում են հաջող հանգամանքների շնորհիվ: Այս տեսանկյունից «Մանկավարժական մարդաբանությունը մի կողմից ուսումնասիրում է կյանքի իրավիճակային զարգացումները, մյուս կողմից՝ մարդու պահանջմունքները, հետաքրքրությունները, դրդապատճառները, վարքագիծը» [6,16]: Մարդկանց իրենց վերագրվող մտացածին որակները հնարավորություն են տալիս կայանալու կյանքում՝ առանց իրենց կողմից լուրջ ջանքեր գործադրելու: Սա նման է դաստիարակող-դաստիարակվող այն մոդելին, երբ դաստիարակը դաստիարակվողին վերագրում է այն որակները, որոնք ինքն է ուզում տեսնել: Սակայն միշտ չէ, որ սոցիալական միջավայրը նպաստավոր պայմաններ է ստեղծում: Խորն է էպոսի փիլիսոփայությունը:

Եզրակացություն: «Մասնա ծռեր» էպոսը ոչ միայն մշակութային բացարձակ արժեք է, այլև մանկավարժական մարդաբանության տեսանկյունից յուրօրինակ սկզբնաղբյուր, որը նախադրյալներից մեկն է հայ իրականության մեջ մանկավարժական մարդաբանության գիտաճյուղի ձևավորման ու զարգացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մասունցի Դավիթ, համահավաք բնագիր, Երևան, 1990:
2. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908:
3. Սողոմոնյան Գ., Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, ԵՊՀ, «Բանբեր. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, 1/19/, էջ 18-33:
4. Коджаспирова Г. М., Педагогическая антропология, М., 2005.
5. Максаква В. И., Педагогическая антропология, М., 2004.

ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ПЕДАГОГИЧЕСКОЙ АНТРОПОЛОГИЧЕСКОЙ МЫСЛИ В ЭПОСЕ «САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»

Казарян Аревик
*Ереванский государственный университет
Армения*

А н н о т а ц и я

Краткое введение. Для развития каждой научной отрасли необходимы предпосылки формирования, которые имеют разные методологические основы. Предпосылки развития педагогической антропологической мысли

сформировались в фольклоре армянского народа. Они дают возможность увидеть, как же протекал процесс ее развития, а также прогнозировать перспективы этого развития.

Ключевые слова: педагогические антропологические закономерности, амбивалентность, предпосылки развития научной отрасли.

Проблема. Анализ эпического романа «Сасунские Удальцы» с педагогическим антропологическим подходом позволит обосновать, что предпосылки формирования мысли этой научной отрасли существуют также в фольклоре армянского народа, формируя общечеловеческие и национальные ценности, воспитательные модели, которые сыграют неоценимую роль в дальнейшем развитии педагогической антропологической мысли.

Актуальные исследования, связанные с проблемой. Актуальные исследования, связанные с проблемой, были проведены в рамках таких молодых научных отраслей педагогики как педагогическая антропология и педагогическая аксиология. Анализируя и сопоставляя различные подходы и мнения, можно сказать, что предпосылки любой научной отрасли можно найти в народном фольклоре. Общей антропологической закономерностью является то, что все народы имеют эпические романы.

Цель исследования, проведенного в рамках статьи. Целью исследования является анализ эпоса «Сасунские Удальцы» с педагогическим антропологическим подходом, который, помимо того, что является социальным паспортом армянского народа, представляет собой также эволюцию выживания, представляющую биологическую программу, с соответствующими ветвями эпоса и процессом его развития.

Новизна исследования. Рассматривая эпос «Сасунские Удальцы» как социальный паспорт, отражающий существование армянского этноса, он был представлен с точки зрения педагогического антропологического подхода, утверждая, что в данном эпосе существуют все необходимые предпосылки формирования научной отрасли.

Список использованной литературы

1. Сасунци Давид, коллективный оригинал, Ереван, 1990.
2. Абемян М., Армянский народный роман, Тбилиси, 1908.
3. Согомонян И.И. Особенности проявления современного антропологического кризиса, ЕГУ, Банбер, Философия, Психология, 2016, 1 /19/, с. 18-33.
4. Кодзаспирова Г.М. Педагогические антропологи. М., 2005.
5. Максакова В. И.З., Педагогическая антропология, М., 2004.

PRECONDITIONS FOR PEDAGOGICAL ANTHROPOLOGICAL THOUGHT IN THE EPIC "SASNA TSRRER"

Ghazaryan Arevik
Yerevan State University,
Armenia

Summary

Brief introduction: The development of each branch of science requires preconditions for formation, which have different methodological bases. The preconditions for the development of pedagogical anthropological thought were formed in the folklore of the Armenian people. They give an opportunity to see what the development process was like and to predict the development prospectives.

Keywords: Pedagogical anthropological patterns, ambivalence, preconditions for the development of the scientific branch.

The problem: The analysis of the epic novel " Sasna Tsrer " with a pedagogical anthropological approach will be substantiating that the preconditions for the formation of the discipline and the scientific mind of this branch of science exists in the folklore of the Armenian people, forming universal and national values, educational models that will play an invaluable role in future development of anthropological scientific mind.

Up-to-date research on the issue: Current research on the issue has been carried out within the framework of young branches of pedagogy: pedagogical anthropology, cultural anthropology, pedagogical axiology. Analyzing and combining different approaches and opinions, one comes to conclusion that the preconditions of any new branch of science can be found in folklore It is a general anthropological regularity: all nations have epic novels.

Purpose of the research conducted within the framework of the article: The aim of the research is to analyze the epic novel " Sasna Tsrer " with a pedagogical anthropological approach, which, in addition to being the social passport of the Armenian people, is a survival evolution representing the biological program, with relevant branches of the epic novel and their development process.

The novelty of the research: Considering the epic " Sasna Tsrer " as a social passport representing the existence of the Armenian ethnos, it was presented from the pedagogical anthropological aspect, stating that the epic has all the necessary preconditions for the formation of a scientific branch

References:

1. David Sasuntsi, collective original, Yerevan, 1990.
2. Abegyan M., Armenian folk novel, Tbilisi, 1908.
3. Soghomonyan I.L., Features of the manifestation of the modern anthropological crisis, YSU, Banber, Philosophy, Psychology, 2016, 1 /19/, pp. 18-33.
4. Kodzaspriova G.M., Educational anthropologists, M., 2005.

5. Maksakova V.I.Z., Pedagogical anthropology, M., 2004.

Материал был представлен и отправлен на рецензию: 30.09.2021

Принято к публикации: 28.10.2021

Рецензент: канд пед. наук, ассистент Мери Оганнисян

The material was submitted and sent to review: 30.09.2021

Was accepted for publication: 28.10.2021

Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyan

